

Համերգ՝ Հայաստանում Իսրայելի մշակույթի օրերի շրջանակում

21.05.2015



Հայաստանում Իսրայելի մշակույթի օրերի շրջանակում Եղեգնաձորի մարզային մշակույթի կենտրոնի համերգային մեծ դահլիճում կայացավ Իսրայելի պաշտոնական պատվիրակության ստեղծագործական խմբի համերգը: Համերգին ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը և Իսրայել-Հայաստան բարեկամության խորհրդարանական խմբակցության նախագահ, Քնեսեթի պատգամավոր Ջեկվ Էլկինը:

Համերգային գեղեցիկ համարներն ընդհատվում էին բուռն ու երկարատև ծափահարություններով:

Համերգի ավարտին մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը մշակութային խմբին հանձնեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի շնորհակալագիրը և բարձրարժեք կատարումների համար շնորհակալություն հայտնեց: